

## Հալեպի Մուֆթիի Պաշտօնական Այցը Վերապատուելի Համայնքապետին

Կիրակի 23 Փետրուար, 2014-ին, Վերապատուելի Յարութին Սելիմեանը ջերմօրեն ողջունեց Հալեպի Մուֆթին՝ Դոկտ. Մահմուտ Աքքամը, իր գրասենեակին մեջ: Հանդիպման ընթացքին քննարկեցին եւ կարեւորութեամբ անդրադարձան քրիստոնէայ-իսլամ երկխօսութեան մասին որպէս փոխադարձ եւ խաղաղ քրիստոնէայ-իսլամ գոյակցութեան Սուրիոյ մէջ: Դոկտոր Աքքամ ընդգծեց, թէ՛ ուրիշ ազգեր նաեւ սորվելու են Սուրիական Արաբական հանրապետութենէն կրօնական համայնքներու գոյակցութեան վերաբերեալ: Սուրիան միշտ եղած է հիանալի օրինակը ողջ աշխարհի մէջ, երբ խօսքը կը վերաբերի համատեղ գոյակցութեան: Հանդիպումի աւարտին երկու կողմեր մաղթեցին փոխադարձ յաջողութիւն եւ իւրաքանչիւրը յայտնեց փափաք կրկին հանդիպելու:



